Մարմնչում են այգիները,
Շանթեր նետում մայիսին։

Մերթ հանց ծանր երկունքի մէջ՝
Ծով ջրերը հառաչում,
Եւ ափափանք չգտնելով,
Ամպերի պէս մարմնչում։

Մտանում են նոր՝ նաւակին
Ու գիրկ առնում, շոյելով,
Մերթ կատաղած դէպ վեր նետում,
Դառ փոթորկին յանձնելով։

Նա չէ վախում, նա յաղթում է.
Հպարտ՝ առաջ ընթանում,
Նա տեսնում է հեռւում փարոս
Եւ դէպի նա սլանում։

29

Ես բառ չունեմ, որ քեզ պատմեմ
Այգիները սրտիս մէջ,
Ծաղկեր չունեմ, որ քաղ անեմ
Քեզ ցանկալի սիրոյ մէջ։

Թէ, յիշում ես, գիտես սիրել—
Սիրել՝ սրտի վառ սիրով,
Դու լաւ նայիր իմ ճակատին
Մէջ խուսափող աչքերով։

Եւ դու այնտեղ առանց խօսքի
Շատ կիմանաս զրոյցներ,
Կրծքիս տակին խարոյկներից
Շատ անմառնէջ մրմունջներ։

30

Մենք մենակ էինք բնութեան գրկում.
Ամեն ինչ անդորր և խոր լռութիւն։
Լուսին ու աստղեր մեզ էին նայում
Եւ լռում առնում մեր ուրախութիւն։

Դալար առուակն էր թափից կարկաչով
Երգ ներդաշնակում մեր սրտի երգին,
Եւ մեղմիկ զեփիւռ գիւթիչ մրմունջով
Օր-օր շշնջում յոգնած աշխարհին։

Մենք նստած էինք մէջ այդ վարդերին,
Հեզիկ գլուխդ թեքած էր կրծքիս։
Աչերդ յառած իմ լուռ հայեացքին,
Կեանք էիր շնչում հրատապ սրտիս։

Բայց անցան ժամեր այն երջանկութեան
Եւ բոլոր բերկրանք այդ առօք անցեալ է

Սուզուած են երբեմն խաղաղ գիշերուան
Անոյշ մեղեդիք դալար ծառերի։

Եւ մաշող կարօտ հետ լուռ տխրութեան
Ինչպէս ան այսք սրտումս ծփում.
Եւ գաղջը երգեր փարթամ բնութեան
Եւ սէր և վիշտ են ականջիս հնչում։

ԱՐՇԱԿ ՉՈՊԱՆՅԱՆ

# ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Տպագրական գործի 400-ամեակի առթ հայ հասարակայնութեան կողմէց կազմակերպուած և ամենայն ճոխութեամբ հրապարակ հանուած տպագրական ֆոնդը՝ որի մասին մենք արդէն խօսել ենք և դեռ պատմութիւն կունենանք խօսելու։

Դրականական ֆոնդը խեղդող և նրա փոխարէն գրադարանական ֆոնդը հրապարակ հանողներին մենք անտանելի էինք ուղղուցածութեներ և այս պարզ էր, քանի որ մեկի անտանելութեան պատիր, ննջութեամբ ինչ մի ուրիշ։

Այսուամենայնիւ հասարակութիւնը գրքի նշանակութիւն առաւ թէ հայրենասիրական ուռճացրած ֆոնդականներին և թէ փոքրիկ փարձագործ գործած եկեղեցականների ու փարգապետների ճամարտակութիւններին։

Միակ հայ եկեղեցականը, այն էլ բարձր աստիճանաւորներից, որ Մեծ Յոբելեանի նշանակութիւնը չափից իւր խօսական արժէքով և հանդէս եկաւ մի առաջարկութեամբ, որ յամենայն դէպս խորթ չէ գրքի տպագրութեան գործին և հայ մատենագրական կեանքին, Կ. Պոլսոյ նախկին պատրիարք Օրմանեանն է, որ այս առթի առիթով մի առաջարկ յղուած է գետեղել «Բիւզանդիոն»ի մէջ և որի առանձին նամակով ուղղուել է խմբագրութեանը՝ դրա մասին մեր կարծիքը յայտնելու։

Այդ յղուածի առթի «Բիւզանդիոն»ը կցել է իւր նկատողութիւնը։

Տպելով որոշանի յղուածը «Բիւզանդիոն»ի նկատողութեան հետ, մեր անկիլը՝ տեղի սղութեան պատճառով թողնում ենք «Մարտ»ի հետևեալ համարին։

## ՄԵԾ ՅՈԲԵԼԵԱՆԻՆ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԱՌԱՋԱՐԿ ՄԸ

Մեծ Յոբելեանը, որ հայ մատենագրական կեանքի առթիւ պիտի ըլլայ, անշուշտ մեծապէս զբաղած էր, և փափաք կայ անոր յատուկ նշանակութիւն և փայլ տալ արտաքոյ կարգի հանդէսներով մը կապակցել 1102—13 թուականէն, որ թէ՛ ալ ըլլան տարբեր գեղեցութեանց

արդիւնքները, ուրկէ ծանչցուած է իր հայ Դպիրն և հայ Տիկնոջ գաղափարը, թէ՛ ու ժամանակագրական ամենափոխ նշումներով, զանց ընդհանուր ընդունելութեամբ։

Յանախորդութիւններու և հանդէսներու մէջ մասը առաջնայ ցուցքերով կանչենք. հաւ, երգ, հաչ, երեկոյթ, ղալդակամուլեր, և այլ նմաններ, որոնք պէտք են իր արտայայտութիւն և իր վայելք, բայց հետք չեն թողուր։ Միւս մասը մնայուն նշաններու վրայ կ'հաստատուի. գիրք, արձանագիրք, քանդակ, պէզ, և նմաններ։ Բայց վերջին տեսակներ սխած է ընդհանրական գրականութեան (Խամա) կողմերու եղանակը, և անոր չափով ամէն արդիւնաւ մնանորդ մը կամ գործ մը տարածելու փափաքը։

Այս տեսակ ու այս տեսակ նախաձեռնութիւններ սէր սէր սխած են։

Արչափ կ'ըսեմ և կ'ենթադրեմ ազատական և ազատաչական նպատակներ կը դրուին նոր գրականութիւններու մանուկներուն, և ճիշդ այդ մասին է իմ ըսելիք առաջարկը։

Չեմ ուրանար որ ազատութիւն և ամենայնութիւն կարեւոր նպատակներ են, բայց ուրիշներ ալ պէտք է համաձայնին, որ սահմանափակ են, անդական կիրարկման ուժին, ամենական նախանձախնդիր կը կրեն, և միայն որոշ անհատներ են անոնց նպատակակից։ Միւս կողմէն երկուքն ալ մեր ազգի մէջ չեղած բաներ չեն, և պարագաները համեմատ կ'առաւելին և կ'պակասեն նպաստել, և որ աւելին է, ընդհանուր ազգութիւն իր ուղղակի նպատակ չունենալ, ինչպէս ալ ազգը անուղղակի կ'օգտուի անոնցմէ։

Այդ նամակներովս է, որ ես կը յորդորեմ Մեծ Օրիորդին յանձնառութեան համար այնպիսի նպատակ մը առնելու, որ իր սեռի մէջ եղական ըլլայ, արժանապէս մնայ յանձնուած կէտ մը չըլլալ, և Ազգին հանրութեան ուղղակի յառաջդիմութիւն ունենայ։ Այդ նպատակին համեմատ կուզեմ առաջարկել ամէն մարզիկներուն, յանձնաժողովներու, մասնաժողովներուն, և ուրիշ նախաձեռնողներուն, որ անոնցմէ ալ իրենց հաւասար և հաւաքիչ գործակցութիւնները իրարու միացնեն, և համագործակցութեան ուժին դարձ տալով, զայն պատուական գումարի մը յանձնեն։

Այդ գումարն տակով կիրարկով չափ տալ, և անոր արդիւնքով սեփականութիւն ըլլայ Կաճառ մը կազմել, ՀԱՅԱԴԻՏԱԿԱՆ ԿԱՃԱՌ մը, որուն նպատակը պիտի ըլլայ հայութեան վերաբերեալ ուսումները քաջալերել, եղածը կարգաւորել, մանաւոր գրադարանը համախմբել, գեղարուեստները յուզել, պահպանել, կարգաւորել, կազմակերպել համախմբել, և նոր ճիւղեր ճշդել։

Այդ կէտերն յարմար է հետեւեալ չորս բաժանմունքներու մէջ ամփոփել։

1. Լեզու հին և նոր։

2. Պատմութիւն և Աշխարհագրութիւն։

3. Արուեստ և Արհեստ։

4. Հաւատք և Կենցաղ։

Թերեւս յարմար կը կանանց հաստատել Կեդրոնին մէջ, իր Մայր Աթոռ և Մայր Կեդրոն, բայց ներկայ պարագաներու մէջ նախադասելի կ'ըլլայ Եգիպտոսը, իր ամէն կողմ ցրուած մասերու փոխանցում յարաբերութեանց գերազանց միջնաձայն մը։

Կաճառին կազմութեան կարևոր դերերը մը պատրաստելու, հաւաքումի թողլով, բաւ մը նախագիծներ կամ հիմնականներ յղելը բաւական կ'ըլլայ։

Կեդրոնին մէջ կ'հաստատուին իւրաքանչիւր ճիւղին համար գիտուններ, հմուտ և կարող պաշտօնեաներով, իւրաքանչիւր ճիւղին համար երկու կամ երեք անձ։

Այս պաշտօնեաները վարձատրեալ ըլլալու, կրնան հաւաքումի յարմարութիւնները' որ կողմէն ալ ըլլան։

Կաճառականներ պիտի որոշուին իւրաքանչիւր ճիւղի համար դաս դաս, և պիտի տանուին ամէն հայերէ և հայագէտներէ առանց խտրութեան սեռի և ազգի և կրօնի։

Կաճառականներուն համար պայման չէ Կեդրոնին մէջ ապրիլ, վասն զի ժողովական գումարները տարեկան կամ երկտարեկան պիտի ըլլան, թէ ընդհանուր կաճառին և թէ մասնաւոր ճիւղերու հաւաքումներով։

Բուն կաճառականներ իւրաքանչիւր ճիւղի համար տասներկու բաժանած կ'ընտրուին, իսկ թղթակից ընկերներ կրնան ըլլալ անսահման թուով։

Առաջին տեսակ հիմնադիրներու անուանմամբ կայք նոր ընտրութիւններ և նախագահութիւններ կաճառականներու քուէով կ'որոշուին։

Ուսումնասիրութեանց համար կրնան որոշ նիւթեր ալ առաջադրել, առանց մասնաւորները խափանելու, որոնց վրայ կարծիքներ կ'հաւաքուին և քննադատներ կ'որոշուին։

Թէ որոշուած և թէ ազատ ուսումնասիրութեանց գրուածները, և կաճառին գործերը յատուկ պարբերականով կ'հրատարակուին։

Դրամագլուխին արդիւնքով և պատահական նուէրներով և տարեկան բաժանորդութիւններով կ'հոգացուին, ժողովներուն, գիտուններուն, պաշտօնեաներուն, հրատարակութիւններուն և թղթակցութիւններուն ծախքերը։

Ներկայ է նիւթական պիտոյութիւններ բերել կառավարչներու և թեմակալներու, եթէ իրենց ուսումնասիրութեանց համար պահանջուած միջոցները չունին։

Այս և դեռ նման չսահմանուած մանրամասնութիւններ աշխարհական փոփոխութիւններ, այլ սկզբունքով հաստատուն կանոնագրի պէտք վերապահուին, նոյն իսկ կառավարման ձևերով։

Անա այդ հաստատութիւնն է որ մեր ամբողջութեամբ, Ընդհանուր հայութեան համար նշանակութիւն ունենայ, անհրաժեշտ եղած, բայց պատշաճ նպատակ չսահմանուած պէտք մը կ'երևցնէ, հայագիտական ուսումներու զարգացման և բարձրագոյն ուսումնասիրութիւններով զբաղողներն իրարու կ'մօտեցնէ, և իբր Մեծ Տարեկանին մեծութեան համեմատ մեծ գործ մը կ'ըլլայ, նպատակին և պարագաներուն մեծութեան համապատասխան։

Ես առաջարկեցի Խոսրով Մեծ Տարեկանով զբաղողներուն Անիի բնագրական բացատրութեանց պատրաստ կ'մնամ, եթէ գիտութիւններու ճանաչման։

24 Մարտի 1913 ՄԱՂ. ԱՐՔ. ՕՐՄԱՆԵԱՆ

---

ԽՄԲ. ԾԱՆ.—Օրմանեան Սրբազանի առաջարկը գեղեցիկ է և խորհրդաւոր, նաև օգտակար հետևանքներով լեցուն։ Անկէ առաջ պէտք յիշենք այն գործին զոր դարդ կատարեց են Ս. Էջմիածին, Վենետիկ և Վիեննա, նաև Պարիս, Տիֆլիս, Արմաշ, Երուսաղէմ, և ուրիշ շատ հիմներու վրայ պէտք գծեր դրել։ Բայց, մեր կարծիքով, ուրիշ իրերէ մէկ առ որ պէտք է նշանել, թէ ամէն գրական կարգերունն մը։ Որպէս զի այս ծրագիրը յաջողի, մէկ շատ դրամ պէտք է, և մէկ մեծադրամին ինքն ևս ուրիշ հարուստ պէտք է ըլլայ ամէն կարգի ժողովրդական Հայ տարրով։ Անանց մեծագումար բարերարութիւններու, միայն ժողովրդային նուէրներով այսպիսի հսկայական խորհուրդ մը իրագործուած անհնարական կ'երևի մեզ։ Հայ ժողովուրդն աղքատացած է, գրական է, այդքէն հեռու առկ մը հիմնուելիք յոյժ գրական հաստատութեան մը համար այնքան յանձնառական նանդամակութիւն չի բանար իր մէջ։ Ու եթէ մեծադրամ գումար մը Հայոց համար պատմագրերի ըլլար, մեր պէտքեան Հայ եկեղեցականութեան մէջ, ուրիշ ստորադրական կ'նպաստէ իր այն գրական գործունէ հող գծելու և յառաջիկային Հայ մշակներուն բաշխելու, որպէս զի ապիկ հատուէին հայրենի երկրին և հեռ անին, բան ազգայնական ուսման յառաջացնելու, որոնք կ'առնենք մէկ այժմեան քաղաքակիրթ զարգացման բով այնքան հանր չէն կրնար ժողովրդի մը քաղաքակրթական իրաւունքները ճանչնալու և պաշտպանելու համար որչափ կ'երևան նիւթական կարողութիւնը, նիւթական գինքը, բնակչութեան թիւը, ֆինանսական ոյժն և գրական արժանաւորութիւնը։ Հայը զարգացնել ուրիշ կ'նպաստէ նիւթական, ճարտարական, գրական, տնտեսական կարողութիւններու, բան ասոր ազգայնական կամ գիտարուեստական կարեւորներու։ Իր մտաւոր զարգացումներն իսկ տնտեսական, ճարտարական, քաղաքակրթական նպատակ մը պէտք է ունենան առաւելապէս, մինչև որ իրեն համար նիւթական գինք մը չունան

## ԼՐԱԳՐԵՐՈՒՄ ԵՒ ՀԱՆԴԷՍՆԵՐՈՒՄ

Ինչպէս և պէտք էր սպասել հայ թերթերը յուզուել են Էջմիածնի նորագոյն կարգադրութեան առիթով։ Ճշմարիտ է, կար մի ժամանակ, որ «Հորիզոն»ը առանձին համոզմամբ և անդադար, այն էլ առանց յառաջուցէ նշանակուած թեկնածուի միջոցով ներբողում էր թէ ինչպէս «ամեն ամենակալը» մեր է բարեկամ, վեր ելնում, ով նայում, անհուն մեծ, առում և այժմ ինչպէս այդ «ամեն ամենակալը» բարեմիտ կաթողիկոսը, այժմ ինչպիսի մեծարանք հանդէսներով նա այս օրը, այն օրը... մի խօսքով «Հորիզոն»ը և «Նոր Էջմիածին»ը առանց դադարի էին երգում ի մի ձայնիւ, բայց այսօր երևում է, որ Աստուած ոչ գուցէ այն ատոր և «Հորիզոն»ը ամենայն իրաւամբ գրում է. (№ 161).

«Մեր զարմանքը այստեղ կատարեալ հոգեկան տառապանք չէ բնաւ, մեզ շատ քիչ յայտնի է ներքին ընթերցողն պատմութիւնը առաջադրած եկեղեցական ընկերութիւն։ Մեզ զարմանալի այսպէս էջմիածինն է, թէ ինչպէս հեշտութեամբ նա կարողացաւ իր վրայ վերցնել այդչափ մեծ պատասխանատուութիւն հանդէպ իր ժողովրդի։ Կամ թէ հաշուել է հոգևոր իշխանութիւնը, թէ ինչ փառքի ու կանգառականութիւնների տակ է բաց անում մեր եկեղեցական ներքին գործերի համար, որոնց մեծագոյն մասը յղուած են գաւառներում և որ իրենց կողմից հանդիպում է գիւղի ազգս ամէն ուղին։ Մենք պէտք չենք խօսում այն ինքնագլխութեան մասին, որ առաջարկած թոյլ է տալիս էջմիածին հանդէպ իր ժողովրդի և ազգի.»

Զարմանք, որ «Հորիզոն»ը ներողամիտ էր, երբ էջմիածնի այժմեան գահակալի գործունէութիւնը քննադատում էր այն ժամանակ, երբ նա դեռ առաջնորդ էր, այսուամենայնիւ զանց այսօր նա առում է.

«Ամեն հայ բաղձում ազգի սէրն ու հաճոյք միայն է բարօրութեան դարձնելու իր ժողովրդի կամքը հարգելու, երբ գործը հասնում է նրա այն կամ այն իրաւունքների ամբողջական, պէտք է նա յանձնարարում ենք իր ժողովրդի ու պատմութեան առաջ։ Կամ ոչ չէ, մեզ թւում է, թէ էջմիածինը կարող է ուղղել իր մեծ սխալը։

Կարող է, բայց կուզէ՞...

---

Բաքուին փոխանցուած օրերին Սմբատեան Մեսրոպ եպիսկոպոսը (այն ժամանակ Շամախու թեմի առաջնորդ) թոյլ չտուեց, որ նրա յիշատակին հոգեհանգիստ կատարուի հայոց եկեղեցիներում, առարկելով, որ նա հերձուածող է, իսկ Բաքուի հերձուա-